Հավելված
Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպանի
2018 թվականի ապրիլի 27-ի
թիվ 7 - Լ հրամանի

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌՑԱՆՑ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին (այսուհետ՝ Պաշտպան) առցանց բողոքների ներկայացման պահանջները, եղանակներն ու ժամկետները, դրանք քննարկելու առնչությամբ ծագող հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով բողոք է համարվում նաև առաջարկությունը, հաղորդագրությունը, հարցումը և դիմումը:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից իր իրավունքների և ազատությունների խախտման դեպքում յուրաքանչյուր ֆիզիկական և իրավաբանական անձ իրավունք ունի դիմելու Պաշտպանին:

4. Այլ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով Պաշտպանին կարող են դիմել Օրենքի 16-րդ հոդվածի 4-5-րդ մասերում նշված անձինք, մարմինները և կազմակերպությունները:

II. ԱՌՑԱՆՑ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Ֆիզիկական կամ իրավաբանական անձը Պաշտպանին առցանց բողոք կարող է ներկայացնել ombuds@ombuds.am պաշտոնական էլեկտրոնային փոստին նամակ ուղարկելու միջոցով:

6. Առցանց բողոքը պետք է լինի ստորագրված՝ ներառելով բողոք ներկայացնող անձի ազգանունը, անունը, բնակության վայրը (հասցեն) կամ իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը և հետադարձ կապի համար անհրաժեշտ տվյալներ (հեռախոսահամար և այլն): Որևէ այլ հատուկ ձև չի սահմանվում:

7. Ստորագրված բողոքին առնչվող այլ փաստաթղթերի ներկայացման դեպքում դրանք բողոքի հետ միասին պետք է կցվեն Պաշտպանի պաշտոնական՝ ombuds@ombuds.am էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվող նամակին:

8. Առցանց բողոքը պետք է Պաշտպանին ներկայացվի մեկ տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների կամ ազատությունների ենթադրյալ խախտման մասին:

9. Պաշտպանը կարող է չքննարկել այն առցանց բողոքները, որոնք անանուն են, ինչպես նաև այն բողոքները, որոնք տրվել են մեկ տարուց ավելի ուշ այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների և ազատությունների խախտման մասին, բացառությամբ, երբ Պաշտպանը հարգելի է ճանաչում ժամկետը բաց թողնելու պատճառները:

10. Սույն կարգի 6-8-րդ կետերով սահմանված պահանջներին և ժամկետին չբավարարող բողոքի կապակցությամբ Պաշտպանը կայացնում է բողոքը չքննարկելու մասին որոշում:

11. Պաշտպանին ներկայացվող առցանց բողոքների համար պետական տուրք չի գանձվում:

12. Պաշտպանին ներկայացված առցանց բողոքը համարվում է բողոք ներկայացրած անձի համաձայնություն և հիմք է անհրաժեշտ անձնական տվյալները Պաշտպանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից Օրենքով սահմանված կարգով ստանալու համար:

13. Եթե Պաշտպանին առցանց բողոք ներկայացրած ֆիզիկական անձի, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ դրա անունից հանդես եկող անձի ինքնությունը հնարավոր չէ պարզել, ապա բողոքը համարվում է անստորագիր և չի քննարկվում:

14. Էլեկտրոնային փոստը սպասարկող Արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչության պատասխանատու աշխատողը եռօրյա ժամկետում հետադարձ կապի միջոցով առցանց բողոք ներկայացրած անձին նույն եղանակով ծանուցում է բողոքը ստանալու մասին, իսկ սույն կարգի 9-րդ կետով նախատեսված դեպքում, եթե դա հնարավոր է, տեղեկացնում է Պաշտպանին բողոք ներկայացնելու պահանջների և (կամ) այլ վերաբերելի հարցերի մասին:

15. Բողոք ներկայացրած ֆիզիկական անձի, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ դրա անունից հանդես եկող ֆիզիկական անձի ինքնությունը հաստատելու, անձին նույնականացնելու, ինչպես նաև բողոքին ընթացք տալու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ տրամադրելու նպատակով Արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչության պատասխանատու աշխատողը կարող է առաջարկել նրան այցելել Պաշտպանի աշխատակազմ:

16. Եթե Պաշտպանի կայացրած բողոքը չքննարկելու մասին որոշումից հետո բողոք ներկայացրած անձը կրկին ներկայացնում է սահմանված պահանջներին բավարարող բողոք, ապա այն հաշվառելուց հետո սահմանված կարգով ուղարկվում է քննարկման հարցը լուծելու:

17. Էլեկտրոնային թվային ստորագրության կիրառման կամ նույնականացման քարտի միջոցով և սույն կարգի պահանջներին համապատասխան առցանց ներկայացված բողոքը ստանալուց ու հաշվառելուց անմիջապես հետո ուսումնասիրվում և մուտքագրվում է էլեկտրոնային կառավարման «Mulberry» համակարգ:

III. ՊԱՇՏՊԱՆԻՆ ԱՌՑԱՆՑ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

18. Ֆիզիկական կամ իրավաբանական անձը Պաշտպանի www.pashtpan.am կամ www.ombuds.am պաշտոնական կայքի միջոցով կարող է առցանց բողոք ներկայացնել:

19. Պաշտպանին առցանց բողոք ներկայացնելու համար անհրաժեշտ է այցելել Պաշտպանի պաշտոնական կայքի «Դիմել» բաժնի «Առցանց դիմել Պաշտպանին» ենթաբաժինը կամ «Դիմել» գործիքի «Առցանց հարցում» բաժինը:

20. Ֆիզիկական անձը Պաշտպանին բողոք ներկայացնելիս պարտադիր լրացնում է «Անունը», «Ազգանունը», «Հասցե», «Հեռախոսահամար», «Էլ. փոստ» և «Ձեր հաղորդագրությունը» դաշտերը, իսկ ցանկության դեպքում նաև անձը (ինքնությունը) հաստատող փաստաթղթի տվյալները դաշտը:

21. Իրավաբանական անձի անունից հանդես եկող անձը պարտադիր լրացնում է սույն կարգի 20-րդ կետով սահմանված տվյալները, ինչպես նաև իրավաբանական անձի անվանումը, պետական գրանցման համարը, գտնվելու վայրի մասին տեղեկությունները, իսկ ցանկության դեպքում՝ նաև իրավաբանական անձի կազմակերպական-իրավական ձևը, տնօրենի անունը և ազգանունը:

22. Եթե Պաշտպանին ներկայացված առցանց բողոքը պարունակում է մարդու իրավունքների կամ ազատությունների ենթադրյալ խախտման մասին տեղեկություններ, ապա այս դեպքում Արագ արձագանքման և դիմումների ընդունման վարչության պատասխանատու աշխատողը հետադարձ կապի միջոցով, եթե դա հնարավոր է, Պաշտպանին առցանց դիմած անձին տեղեկացնում է Պաշտպանին բողոք ներկայացնելու եղանակների, բողոքին ներկայացվող պահանջների և (կամ) այլ վերաբերելի հարցերի մասին:

23. Պաշտպանին առցանց ներկայացված հարցումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: